

Հարցաշար

Ե.05.01-«Ավտոմեքենաներ և տրակտորներ» մասնագիտության ասպիրանտուրայի 2023-2024 ուս. տարվա ընդունելության

1. Ավտոմոբիլների և տրակտորների հիմնական շահագործական հատկանիշները և դրանց գնահատման չափորոշիչները:
2. Ավտոտրանսպորտային միջոցների (ԱՏՄ-ի) հարմարադասման սխեմաները և դրանց համեմատական վերլուծությունը:
3. Տանող մոմենտ և շոշափող քարշիչ ուժ:
4. Ավտոմոբիլի և տրակտորի վրա ազդող արտաքին ուժեր, դրանց բնույթը և որոշման մեթոդիկան:
5. Ավտոմոբիլի շարժմանը դիմադրող ուժեր:
6. Տանող անիվի դինամիկան, տեղապտույտ:
7. Տարվող անիվի դինամիկան:
8. Ավտոմոբիլի և տրակտորի շարժման հավասարում:
9. Ավտոմոբիլի քարշային բալանս, վերլուծությունը:
10. Ավտոմոբիլի հզորության բալանս, վերլուծությունը:
11. Ավտոմոբիլի դինամիկական գործոն և դինամիկական բնութագիր:
12. Ավտոմոբիլի թափառք՝ արագացումների բնութագիրը:
13. Ավտոմոբիլի թափառք՝ ժամանակի և ճանապարհի բնութագրերը:
14. Ավտոմոբիլի քարշային հատկանիշների փորձնական որոշման մեթոդները:
15. Ավտոմոբիլի քարշային հաշվարկի մեթոդիկան:
16. Թրթուրավոր շարժաբերի կինեմատիկական առանձնահատկությունները:
17. Թրթուրավոր տրակտորի վրա ազդող արտաքին ուժեր, ճնշման կենտրոն:
18. Թրթուրի հենարանային մակերևույթով գետնի նորմալ հակազդման բաշխումը:
19. Տրակտորի հզորության բալանս, վերլուծությունը:
20. Տրակտորի տեսական քարշային բնութագիր, վերլուծությունը:
21. Տրակտորի քարշային հաշվարկի մեթոդիկան:
22. Ավտոմոբիլի տրանսմիսիայի փոխանցման թվերի որոշումը:
23. Տրակտորի տրանսմիսիայի փոխանցման թվերի որոշումը:
24. Տրակտորի քարշային հատկանիշների փորձնական որոշման մեթոդները:
25. Ավտոմոբիլային տրանսպորտի էներգետիկական և էկոլոգիական հիմնախնդիրները:
26. Անաստիճան տրանսմիսիայով ավտոմոբիլի քարշային դինամիկայի առանձնահատկությունները:
27. Ավտոմոբիլի արգելակային դինամիկա, դանդաղեցման որոշումը:
28. Ավտոմոբիլի արգելակային դինամիկա, արգելակման ճանապարհի որոշումը:
29. Ավտոմոբիլի վառելիքի շահավետություն, էկոնոմիկական բնութագիր:

30. Դիֆերենցիալներ, դրանց նշանակությունը, տարատեսակները, աշխատանքը և հիմնական պարամետրերը:
31. Անիվավոր ինքնագնաց մեքենաների շրջադարձի կինեմատիկան:
32. Անիվավոր ինքնագնաց մեքենաների շրջադարձի դինամիկան:
33. Թրթուրավոր ինքնագնաց մեքենաների շրջադարձի կինեմատիկան և դինամիկան:
34. Թրթուրավոր տրակտորների շրջադարձի տեսություն, շրջադարձին դիմադրող մոմենտ:
35. Ավտոմոբիլների և տրակտորների արգելակային հատկանիշների բարելավման ժամանակակից եղանակները, արգելակային ուժի կարգավորիչներ, հակաբլոկավորվող սարքեր:
36. Շահագործական գործոնների ազդեցությունը ավտոմոբիլի վառելիքի շահավետության վրա:
37. Տրակտորի և ավտոմոբիլի կայունություն, կայունությունը կողաշրջման նկատմամբ:
38. Ավտոմոբիլի և տրակտորի կուրսային կայունություն: Կայունությունը կողատարման նկատմամբ:
39. Ավտոմոբիլի և տրակտորի անցանելիություն: Անցանելիության կառուցվածքային, քարշակցման և հենարանային չափորոշիչները:
40. Տրակտորի ագրոէկոլոգիական հատկանիշների գնահատման չափորոշիչները և դրանց որոշման մեթոդիկան:
41. Ավտոմոբիլների և տրակտորների ընթացքի սահունության գնահատման չափորոշիչները:
42. Հիմնական հասկացողություններ ավտոմոբիլի և տրակտորի տարածական տատանումների մասին, ուղղաձիգ տատանումների մաթեմատիկական մոդելը:
43. Ավտոմոբիլների և տրակտորների տիպաժ:
44. Տրանսմիսիայի ագրեգատներում բեռնվածքային ռեժիմների գնահատումը:
45. Ոլորող տատանումները տրանսմիսիայի ագրեգատներում:
46. Տրանսմիսիայում ոլորող մոմենտի առավելագույն արժեքի որոշումը:
47. Ճանապարհի անհարթություններից ավտոմոբիլի և տրակտորի ընթացքային մասի բեռնվածքների գնահատումը:
48. Տրանսմիսիայի ստատիկ ամրության հաշվարկի հիմնական բեռնվածքային ռեժիմները:
49. Տրանսմիսիայի նշանակությունը, տարատեսակները, համեմատական բնութագիրը և աշխատանքը:
50. Անիվների կողատարման ազդեցությունը ավտոմոբիլի կառավարման վրա:
51. Կցորդման ագույցի նշանակությունը, տարատեսակները, համեմատական բնութագիրը և աշխատանքը:
52. Կցորդման ագույցի հիմնական պարամետրերի որոշումը:
53. Ֆրիկցիոն կցորդման ագույցի տեղապատույթի որոշումը և դրա ջերմային ռեժիմի գնահատումը:
54. Փոխանցումների տուփի նշանակությունը, տարատեսակները, համեմատական բնութագիրը:

55. Անաստիճան փոխանցման տուփեր, տարատեսակները և աշխատանքը:
56. Փոխանցումների և բաժանարար տուփերի հիմնական կառուցվածքային պարամետրերի որոշումը:
57. Կարդանային փոխանցումներ, պահանջներ կարդանային փոխանցումների նկատմամբ, տարատեսակները, կառուցվածքը և աշխատանքը:
58. Կարդանային փոխանցման կինեմատիկան, պտտման անհամաչափություն:
59. Կարդանային փոխանցման լիսեռների և հողակապերի աշխատունակության և ամրության ստուգողական հաշվարկներ:
60. Արգելակային մեխանիզմների նշանակությունը, դասակարգումը և համեմատական բնութագիրը:
61. Թմբուկային արգելակային մեխանիզմներում ճնշման բաշխումը կոճղակի երկարությամբ:
62. Կոճղակների վրա արգելակային մոմենտի որոշումը:
63. Սկավառակային արգելակային մեխանիզմների կառուցվածքի և հաշվարկի առանձնահատկությունները:
64. Գլխավոր փոխանցում, պահանջներ գլխավոր փոխանցումների և դիֆերենցիալների նկատմամբ, հիմնական պարամետրերի որոշումը:
65. Ավտոմոբիլաշինության և տրակտորաշինության զարգացման ժամանակակից միտումները:
66. Գետնի կողմից անիվների նկատմամբ նորմալ հակազդումների որոշումը:
67. Ներքին այրման շարժիչների (ՆԱՇ) դասակարգումը, ընդհանուր կառուցվածքը և բնութագրական պարամետրերը:
68. ՆԱՇ-երի աշխատանքի իրական ցիկլերը:
69. Ներքին այրման շարժիչների տեսական ցիկլերը / Օտտոյի ցիկլ, Դիզելի ցիկլ, Տրինկլերի ցիկլ/:
70. ՆԱՇ-ների տեսական ցիկլերի համեմատումը:
71. ՆԱՇ-երի տեսական ցիկլերի էներգետիկ ցուցանիշները:
72. ՆԱՇ-երի ինդիկատորային դիագրամա: Դրա կառուցումը և վերլուծումը:
73. Ներածման պրոցես: Ծնշումն ու ջերմաստիճանը ներածման վերջում:
74. Օդի ավելցուկի գործակիցը և բանվորական խառնուրդի կազմի գնահատումը:
75. Սեղմման պրոցես: Ծնշումն ու ջերմաստիճանը սեղմման վերջում:
76. Վառելիքի այրման համար անհրաժեշտ օդի քանակի որոշումը:
77. Հեղուկ վառելիքի այրման ջերմության որոշումը:
78. Գազային վառելիքի այրման ջերմության որոշումը:
79. Այրման արգասիքների կազմը և քանակը $\alpha < 1$ դեպքում:
80. Այրման արգասիքների կազմը և քանակը $\alpha \geq 1$ դեպքում:
81. Այրվող խառնուրդի բռնկում և բոցավառում:
82. Խառնուրդագոյացում: Իրական ցիկլերի համեմատական գնահատումը:

83. Ներքին այրման շարժիչի ջերմային բալանսը:
84. ՆԱՇ-երի ինդիկատորային և արդյունավետ ցուցանիշները:
85. ՆԱՇ-երի ցիկլի ջերմային Օ.Գ.Գ-ն և միջին ճնշումը:
86. Ներքին այրման շարժիչի հիմնական չափերի որոշումը:
87. Բենզինային շարժիչի կարգավորման բնութագիրը ըստ վառելիքի ժամային ծախսի:
88. Դիզելային շարժիչի կարգավորման բնութագիրը ըստ վառելիքի ժամային ծախսի:
89. Բենզինային շարժիչների արագության բնութագիր, վերլուծությունը:
90. Դիզելային շարժիչների արագության բնութագիր, վերլուծությունը:
91. Տրակտորային դիզելների կարգավորիչային բնութագիր, վերլուծությունը:
92. Շուռովիկ-շարժաթևային մեխանիզմի կինեմատիկան: Մխոցի անցած ճանապարհի, արագության և արագացման որոշումը:
93. Գազաբաշխման մեխանիզմի տարատեսակները, կառուցվածքը և աշխատանքը, համեմատական բնութագիրը:
94. Հովացման համակարգի նշանակությունը, տարատեսակները, ընդհանուր կառուցվածքը, համեմատական բնութագիրը:
95. Յուղման համակարգի նշանակությունը, տարատեսակները, ընդհանուր կառուցվածքը, համեմատական բնութագիրը:
96. Վառոցքի համակարգի նշանակությունը, տարատեսակները, ընդհանուր կառուցվածքը, համեմատական բնութագիրը:
97. Բենզինային շարժիչների սնման համակարգի նշանակությունը, տարատեսակները, ընդհանուր կառուցվածքը, աշխատանքը և համեմատական բնութագիրը:
98. Դիզելային շարժիչների սնման համակարգի նշանակությունը, տարատեսակները, ընդհանուր կառուցվածքը, աշխատանքը և համեմատական բնութագիրը:
99. Գազային շարժիչների սնման համակարգի նշանակությունը, տարատեսակները, ընդհանուր կառուցվածքը, աշխատանքը և համեմատական բնութագիրը: